12 մարտի 2009 թվականի N 234 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի N 1524-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ

Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ո ւ մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 11-ի «Գույք հանձնելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 21-ի N 1893-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 1524-Ա որոշման 1-ին կետը «ամրացված» բառից հետո լրացնել «, ինչպես նաև հաշվեկշռում գտնվող» բառերով, իսկ որոշման հավելվածը լրացնել հետևյալ նոր՝ 109.1-109.9-րդ կետերով՝ «

109.1	Համակարգիչ	լրակազմ	3	402.7	1208.1
109.2	Համակարգիչ	լրակազմ	1	293.15	293.15
109.3	Ֆոտոապարատ« Sony DSC-S600»	հատ	1	94.4	94.4
109.4	Համակարգիչ	լրակազմ	3	402.7	1208.1
109.5	Սեղան	հատ	1	282.5	282.5
109.6	Աթոռ	հատ	1	235.4	235.4
109.7	Հեռախոսի տակդիր	հատ	1	117.7	117.7
109.8	Սեղանի դիմադիր	հատ	1	70.6	70.6
109.9	Պահարան	հատ	1	235.4	235.4

»

2. Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարին և Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարին՝ մեկամսյա ժամկետում սահմանված կարգով ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված գույքի հանձնման-ընդունման աշխատանքների իրականացումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

2009 թ. մարտի 16
Երևան